

Ընդհանուր տեղեկատվություն վիճակագրական արտադրանքի մասին		
0.1	Անվանումը	Ընդհանուր կառավարության տարեկան ֆինանսական հաշիվներ
0.2	Ոլորտը	Պետական ֆինանսներ
0.3	Պատասխանատու մարմինը, բաժինը, անձը և այլն	Արմստատ Ֆինանսների վիճակագրության բաժին Բաժնի պետ Հայկուշ Տիտիգյան Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Հանրապետության պող., Կառավարական տուն 3 Հեռախոս՝ +374 11 583 049, Էլ. փոստ՝ haykush@armstat.am , info@armstat.am
0.4	Նպատակը և պատմությունը	Միասնական և համակարգված ձևով օգտագործողներին տրամադրել վիճակագրական տեղեկատվություն ընդհանուր կառավարության գործառնությունների վերաբերյալ: Մինչև 2008թ. պետական բյուջեի, իսկ մինչև 2009թ. համայնքների բյուջեների ցուցանիշների դասակարգումներն իրականացվել են “Կառավարության ֆինանսների վիճակագրություն-1986” ձեռնարկի (GFSM-1986) դասակարգմանը համապատասխան, որից հետ սկսած 2008թ.-ից պետական բյուջեի, իսկ 2009թ.-ից՝ համայնքներ բյուջեների ցուցանիշների դասակարգումներն իրականացվել են “Կառավարության ֆինանսների վիճակագրություն-2001” ձեռնարկի (GFSM-2001) դասակարգմանը համապատասխան:
0.5	Օգտագործողները և կիրառումը	Վիճակագրական տեղեկատվության հիմնական օգտագործողներն են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, հասարակական, գիտակրթական, ֆինանսական կազմակերպությունները, գործարար համայնքը, զանգվածային լրատվամիջոցները, միջազգային կազմակերպությունները և այլն: Ցուցանիշները թույլ են տալիս վերլուծել և գնահատել երկրի հարկաբյուջետային քաղաքականությունը, հատկապես

		ընդհանուր կառավարության հատվածի:
0.6	Տեղեկությունների աղբյուրները	Տեղեկատվության աղբյուր է հանդիսանում որպես վարչական ռեգիստր համարվող ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Արմստատ տրամադրվող տեղեկանքները պետական և համայնքների բյուջեների վերաբերյալ:
0.7	Տվյալների հավաքման իրավական լիազորությունը	Տվյալները հավաքվում են «Պաշտոնական վիճակագրության մասին» օրենքի և «Հնգամյա վիճակագրական ծրագրի» հիման վրա, ինչպես նաև ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2016թ. հունիսի 20-ի «Վիճակագրական տվյալների հավաքման կարգը հաստատելու մասին» թիվ 05-Ն և «Տարեկան վիճակագրական ծրագիրը հաստատելու մասին» որոշումների հիման վրա:
0.8	Ռեսպոնդենտների (սկզբնական տեղեկություններ ներկայացնողների) ծանրաբեռնվածությունը	Ռեսպոնդենտների ծանրաբեռնվածություն չի հաշվարկվում:
1 Բովանդակություն		
1.1	Բովանդակության նկարագիրը	<p>Ընդհանուր կառավարության հատվածը բաղկացած է միավորներից, որոնք իրականացնում են պետական քաղաքականություն հիմնականում մատուցելով ոչ-շուկայական ծառայություններ և վերաբաշխելով եկամուտն ու ունեցվածքը, ընդ որում այդ երկու տեսակի գործունեությունը հիմնվում է այ հատվածներից իրականացվող պարտադիր գանձումների վրա:</p> <p>Ցուցանիշներն ներառում են կենտրոնական կառավարության միավորների և համայնքների միավորների տվյալները Կենտրոնական կառավարությունը ներառում է կառավարման բոլոր միավորները որոնք իրականացնում են կառավարում Հայաստանի ամբողջ տնտեսական տարածքում: Տվյալները ստացվում են եռամսյակային կտրվածքով աճողական կարգով:</p> <p>Որպես վարչական ռեգիստր հանդիսացող ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Արմստատին է տրամադրվում տեղեկանքներ պետական և համայնքների բյուջեների կատարման վերաբերյալ: Այդ տեղեկատվության հիման վրա</p>

		<p>Արմատատի կողմից կատարվում է ընդհանուր կառավարության գործառնությունները բնութագրող ցուցանիշների հաշվարկը, բացառելով այդ բյուջեների միջև ներքին փոխանցումները:</p> <p>Տեղեկատվությունը հրապարակվում է մյն. դրամով:</p>
1.2	Վիճակագրական հասկացություններ	<p>Հիմնական հասկացություններ</p> <p>Ընդհանուր կառավարության /պետական կառավարման/ հատվածն ընդգրկում է այն միավորները, որոնց առաջնային նպատակն է կառավարության /պետական կառավարման մարմինների/ գործառնությունների իրականացումը:</p> <p>Համախմբումը այն մեթոդն է, որի ժամանակ մի խումբ միավորների տվյալները ներկայացվում են համախմբված տեսքով: Համախմբման ժամանակ վերանում են այն բոլոր գործառնությունները և պարտապան-պարտատեր հարաբերությունները, որ գոյություն ունեն համախմբվող միավորների միջև: Այլ կերպ ասած՝ մեկ միավորի գործառնությունը միացվում է երկրորդ միավորի գրանցած միևնույն գործառնության հետ, և երկու գործառնություններն է վերացվում են: Նմանապես, վերացվում են նաև համախմբված միավորների միջև տեղի ունեցած ապրանքների և ծառայությունների առուվաճառքի գործառնությունները:</p> <p>Հաշվետվությունը ներկայացնում է եկամտի, ծախսերի, ոչ-ֆինանսական ակտիվների զուտ ձեռք բերման, ֆինանսական ակտիվների զուտ ձեռք բերման և պարտավորությունների զուտ ստանձման գործարքներ:</p> <p>Պետական և համայնքի բյուջեները պետությանը և տեղական ինքնակառավարման մարմիններին ՀՀ Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման և ծախսման որոշակի ժամանակահատվածի ֆինանսական ծրագրերն են:</p> <p>Բյուջետային եկամուտներն անվերադարձ կարգով օրենսդրությանը համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների դրամական միջոցներն են:</p>

Բյուջետային ծախսերը պետության և տեղական ինքնակառավարման մարմինների խնդիրների և գործառույթների ֆինանսական ապահովմանն ուղղված դրամական միջոցներն են:

1 Եկամուտ

Բոլոր գործարքները, որոնք ավելացնում են ընդհանուր կառավարության հատվածի գուտ կապիտալը դասակարգվում են որպես եկամուտ: Կառավարությունը իր հարկաբյուջետային գործարքներից ստանում է եկամուտների երեք հիմնական տեսակներ. հարկեր, սոցիալական հատկացումներ և այլ եկամուտներ: Ոչ-ֆինանսական ակտիվների վաճառքը եկամուտ չէ, քանի որ այն չի ազդում գուտ կապիտալի վրա: Դրա փոխարեն այն փոխում է հաշվեկշռի կազմը՝ փոխարկելով մեկ ակտիվը (ոչ-ֆինանսական ակտիվ) մեկ այլով (հասույթ վաճառքից):

Եկամուտները դասակարգվում են

- ա) հարկային եկամուտները.
- բ) պետական տուրքերը.
- գ) պարտադիր սոցիալական ապահովության վճարները.
- դ) պաշտոնական դրամաշնորհները.
- ե) այլ եկամուտներ:
 - Հարկերը ընդհանուր կառավարության/պետական կառավարման հատվածի կողմից ստացվող պարտադիր փոխանցումներ/հատկացումներ են: Դրանք ընդգրկում են վճարները, որոնք բացարձակ անկախ են մատուցվող ծառայությունների արժեքից և չեն ընդգրկում պարտադիր սոցիալական հատկացումները, տուգանքները և տույժերը:
 - Սոցիալական հատկացումները ներառում են սոցիալական ապահովության ծրագրերով և աշխատողների այլ սոցիալական նպաստների/ապահովության ծրագրերով՝ բացի թոշակային նպաստներից, ստացվող հասույթները/հատկացումները: Սոցիալական ապահովության գծով նպաստները կարող են լինել պարտադիր կամ կամավոր և կարող են կատարվել աշխատողների, աշխատողների անունից գործատուների,

անհատ ձեռներեցների կամ չաշխատող անձանց կողմից: Դրամաշնորհները կառավարության կամ միջազգային կազմակերպությունների կողմից ստացվող ոչ-պարտադիր փոխանցումներ/հատկացումներ են: Դրանք լրացնում են կառավարության սեփական միջոցներից եկամուտները: Կարող են ստացվել դրամով կամ նյութական տեսքով:

Այլ եկամուտները ներառում են այն բոլոր եկամտային գործարքները, որոնք որպես հարկ, սոցիալական հատկացում կամ դրամաշնորհ չեն դասակարգվում: Հիմնական հոդվածները դա ապրանքների և ծառայությունների վաճառքն է, տոկոսադրույքից և այլ գույքային եկամուտները, դրամական կամ բնաիրային տեսքով կատարվող կամավոր փոխանցումները/հատկացումները կամ մասհանումները/, բացի դրամաշնորհներից, և տույժերը և տուգանքները:

2. Ծախս

Բոլոր այն գործարքները, որոնք պակասեցնում են պետական Կառավարման հատվածի գուտ կապիտալը դասակարգվում են որպես ծախս: Ոչ-ֆինանսական ակտիվի գնումը ծախս չէ, քանի որ այն չի ազդում գուտ կապիտալի վրա: Փոխարենը այն փոփոխում է հաշվեկշռի կազմը, փոխարինելով մեկ ակտիվը (ոչ-ֆինանսական ակտիվ) մեկ այլով կամ պարտավորությամբ (ակտիվի դիմաց վճարում):

Ծախսերի հիմնական տեսակներն են աշխատանքի վարձատրումը, ապրանքների և ծառայությունների օգտագործումը/ձեռքբերումը, հիմնական միջոցների սպառումը, տոկոսադրույքի վճարումը սուբսիդիաները, դրամաշնորհները, սոցիալական նպաստները և այլ ծախսերը: Բացի այդ ծախսը կարող է դասակարգվել ըստ գործառային նպատակի.

1. Ընդհանուր բնույթի հանրային և ծառայություններ
2. Պաշտպանություն
3. Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն
4. Տնտեսական հարաբերություններ
5. Շրջակա միջավայրի պաշտպանություն
6. Բնակարանային շինարարություն և կոմունալ

		<p style="text-align: center;">ծառայություններ</p> <p>7. Առողջապահություն 8. Հանգիստ, մշակույթ և կրոն 9. Կրթություն 10. Սոցիալական պաշտպանություն 11. Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր</p> <p>-Դրամաշնորհները ոչ-պարտադիր վճարումներ/հատկացումներ են կանխիկ կամ բնաիրային տեսքով, որոնք վճարվում են մեկ այլ կառավարության միավորի կամ միջազգային կազմակերպության:</p> <p>-Սոցիալական նպաստները ընթացիկ փոխանցումներ/հատկացումներ են տնային տնտեսություններին, որոնք նպատակ ունեն հոգալու հիվանդության, գործազրկության, թոշակի անցման, կամ տնային կամ ընտանեկան հանգամանքերից առաջացող պահանջները: Կարող է վճարվել կանխիկ դրամով կամ բնաիրային տեսքով:</p> <p>-Այլ ծախսերը ներառում են այլ խմբերում չընդգրկված բոլոր ծախսային գործարքները: Դրանց թվում են տոկոսադրույքից բացի այլ գույքային ծախսերը, հարկերը, մեկ կառավարության նկատմամբ այլ կառավարության կողմից նշանակվող տուգանքները և տույժերը, տնային տնտեսությունները սպասարկող շահույթ չհետապնդող կազմակերպություններին կատարվող ընթացիկ փոխանցումները/հատկացումները, կապիտալ դրամաշնորհներից բացի այլ կապիտալ փոխանցումները/հատկացումները և կյանքի ապահովագրության հետ չկապված ապահովագրավճարները և հայտերը:</p> <p>Պակասուրդը (դեֆիցիտը) և հավելուրդը.</p> <p>Բյուջեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումը կազմում է բյուջեների հավելուրդը: Բյուջեների եկամուտների նկատմամբ ծախսերի գերազանցումը կազմում է բյուջեների դեֆիցիտը</p>
--	--	--

		<p>(պակասուրդը): Պետական բյուջեի պակասուրդը ֆինանսավորվում է ներքին և արտաքին աղբյուրներից ստացվող փոխառու միջոցների, պետական բյուջեից տրամադրված փոխառու միջոցների վերադարձից ստացվող զուտ միջոցների, ինչպես նաև այդ բյուջեի միջոցների տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:</p> <p>Աշխարհագրական ընդգրկունություն</p> <p>Ընդգրկում է Հայաստանի Հանրապետության բոլոր մարզերը և Երևան քաղաքը:</p> <p>Հրապարակման խմբավորումներ</p> <p>Համախմբված բյուջեի եկամուտ, ծախս, պակասուրդ/հավելուրդ, ֆինանսավորման ներքին և արտաքին աղբյուրներ;</p>
2. Ժամանակայնություն		
2.1	Հաշվետու ժամանակահատվածը	Տարեկան
2.2	Հրապարակման ամսաթիվը	Տվյալները հրապարակվում են Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից «Հաշվետվություն Հայաստան Հանրապետության պետական բյուջեի կատարման մասին» որոշման ընդունումից 10-րդ օրվան հաջորդող հրապարակման մեջ:
2.3	Ճշտապահություն	Տվյալները հրապարակվում են տարեկան ծրագրերով հրապարակման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներից ուշացումներ չեն արձանագրվել:
2.4	Հաճախականությունը	Տարեկան
3 .Ճշգրտություն		
3.1	Ընդհանուր ճշգրտություն	Ընդհանուր ճշգրտությանն առնչվող կոնկրետ քանակական չափումներ չեն իրականացվում:
3.2	Անձշտության աղբյուրները	Տարեկան ցուցանիշները վերջնական են:
3.3	Ճշգրտության չափումները/ չափելիությունը	-
4 .Համադրելիություն		
4.1	Ժամանակագրական համադրելիություն	Մինչև 2008թ. պետական բյուջեի, իսկ մինչև 2009թ. համայնքների բյուջեների ցուցանիշների դասակարգումներն

		իրականացվել են “Կառավարության ֆինանսների վիճակագրություն-1986” ձեռնարկ (GFSM-1986) դասակարգմանը համապատասխան, որից հետ սկսած 2008թ.-ից պետական բյուջեի, իսկ 2009թ.-ից՝ համայնքներ բյուջեների ցուցանիշների դասակարգումներն իրականացվել են “Կառավարության ֆինանսների վիճակագրություն-2001” ձեռնարկի (GFSM-2001) դասակարգմանը համապատասխան:
4.2	Համադրելիությունն այլ վիճակագրության հետ	Առկա է համադրելիություն այլ աղբյուրներից ստացվող վիճակագրության (օրինակ՝ ՀՀ ֆինանսների նախարարության նման ցուցանիշների) հետ:
4.3	Նախնական և վերջնական վիճակագրության միջև փոխկապվածությունը	Առաջին անգամ հրապարակված տվյալները որակվում են նախնական: Հրապարակված տվյալների փոփոխություններն ուղեկցվում են բացատրական ծանոթագրություններով:
5. Մատչելիություն		
5.1	Տարածման ձևաչափ	<p>Հրապարակումներ</p> <p>Տարեկան հրապարակումներ «Հայաստանի վիճակագրական տարեգիրք» (հայերեն, ռուսերեն և անգլերեն): «Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն): «Հայաստանը թվերով» վիճակագրական ժողովածու (հայերեն և անգլերեն): «Հայաստանի ֆինանսների վիճակագրություն» վիճակագրական տեղեկագիր (հայերեն, անգլերեն):</p> <p>Տվյալների բազա</p> <p>http://armstatbank.am/pxweb/hy/ArmStatBank/?rxid=602c2fcf-531f-4ed9-b9ad-42a1c546a1b6</p> <p>Ինտերնետային հասցե Հրապարակումների էլեկտրոնային տարբերակները հասանելի են հայերեն (ամբողջական), ռուսերեն և անգլերեն, հետևյալ հասցեով. http://www.armstat.am/am/?nid=82:</p>
5.2	Հիմնական նյութերը. Պահպանումն ու կիրառելիությունը	ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված տեղեկանքները պահպանվում են ինչպես թղթային, այնպես էլ էլեկտրոնային եղանակով:
5.3	Այլ տեղեկատվություն	Տեղեկատվական ամսական զեկույցում հրապարակվում են

		<p>տվյալներ ընթացիկ տարվա և նախորդ տարվա համար:</p> <p>Տարեկան հրապարակումներում ներառվում են տարեկան տվյալներ վերջին 4-5 տարիների համար:</p> <p>Մեթոդաբանական պարզաբանումներ առկա են նաև «Հայաստանի վիճակագրական տարեգրքում», «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը» տեղեկատվական ամսական զեկույցների եռամսյակային թողարկումներում, ինչպես նաև համապատասխան թեմատիկ հրապարակումներում:</p>
<p>6. Լրացուցիչ փաստաթղթավորում</p>		
<p>6.1</p>		<p>Առկա է տեղեկատվություն Ընդհանուր վիճակագրական բիզնես-գործընթացի մոդելի համաձայն հետևյալ հասցեով՝ https://www.armstat.am/am/?nid=373:</p>